

ЛИТЕРАТУРНАЯ БОРЬБА НА СТРАНИЦАХ „БАЗМАВЕП“.

T. A. АСОЯН

В середине 19-го века идет дискуссия вокруг языка художественной литературы, в которой участвуют известные мыслители того времени. В переодике печатаются статьи, представляющие разные мнения.

Орган мхитаристов журнал „Базмавеп“ тоже принимал участие в этой дискуссии. В статье приводятся точки зрения авторов статей о языке литературы и даются обобщения и заключения, к которым приходит автор статьи.

LITERARY STRUGGLE IN THE PAGES OF BAZMAVEP

T. A. ASOYAN

In the mid-19th century there was a discussion about the language of fiction, which brought together prominent thinkers of that time. In the periodicals were published a number of articles representing different views.

The Mkhitarians Journal ՚Bazmavep՚ also took part in this discussion. The article presents the authors of articles on the language of literature and provides generalizations and conclusions that the author of the article has come to.

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Թ. Կ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԳՊՀ դասախոս

Ոուս նշանավոր հոգեբան Լ. Վիգոտսկին բառի և մտածողության քննարկման ժամանակ հանգում է այն հետևողաբանը, որ բառերը օբյեկտիվ իրականությունը վերարտադրում են ընդհանրացումների, իսկ այդ ընդհանրացում-հասկացություններն էլ բառային կաղապարի տեսքով և արտահայտում մեր տեսակետը որևէ առարկայի կամ երևույթի մասին (9):

Փորձելով պատասխանել այն հարցին, թե ինչ է բառը, Վիգոտսկին ասում է, որ բառը և խոսք է, և մտածողություն միաժամանակ, որովհետև բառը խոսքային մտածողության միավորն է: Շարունակելով իր միտքը՝ Վիգոտսկին ասում է, որ հետևաբար մեզ հետաքրքրող հարցի (մտածողության և լեզվի հարաբերակցության) ուսումնասիրության ժամանակ պիտի կիրառվի ինաստաբանական (սեմանտիկական), այսինքն՝ բառի իմաստային կողմի վերլուծությունը, բառի նշանակության բացահայտման մեթոդը: Ուսումնասիրելով բառ-միավորի կառուցվածքը, գործառույթները և զարգացումը՝ մենք կարող ենք տեղեկանալ լեզվական մտածողության բնույթի մասին:

Վիգոտսկին իրավացիորեն նշում է, որ թե՛ լեզվի հաղորդակցական և մտավոր-ինտելեկտուալ գործառույթների, թե՛ մտածողության համար որպես միավոր

ծառայում է բարի իմաստը: «Յաղորդակցումը, որը հիմնված է գիտակցված հասկացման, ապրումների և մտքերի փոխանակման վրա, անպայմանորեն պահանջում է համակարգված միջոց, որի կատարյալ տեսակը մարդկային խոսքն է: Յաղորդակցման մեջ բառը հիմնականում խոսքի արտաքին կողմի կրողն է: Սրանով հանդերձ՝ մանկական տարիքում հաղորդակցության, ընկալման գործընթացի և դրանց զարգացման խնդրի առավել խորը ուսումնասիրությունը հետազոտողներին հաճացրել է այլ եզրակացությամ: Պարզվում է, որ ինչպես որ հնարավոր չէ հաղորդակցվել առանց նշանների օգնության, այնպես էլ շփումն անհնարին է առանց բարի նշանակության կամ իմաստի ընկալման: Դիմացի մարդուն ինչոր ապրում կամ միտք հաղորդելու համար անհրաժեշտ է հաղորդվող բովանդակությունը հայտնի որևէ դասի կամ երևույթների խնդիր մեջ առնել, իսկ սա պահանջում է ընդհանրացում: Այսպիսով՝ մարդուն բնորոշ հոգեբանական բարձրակարգ շփումը հնարավոր է դառնում այն բանի շնորհիվ, որ մարդը մտածողության միջոցով իրականությունն արտացոլում է ընդհանրացված ձևով» (9, էջ 17-19):

Վիգոտսկինն օրինակ է բերում, թե ինչպես մեկն ուզում է դիմացի մարդուն հաղորդել, որ ցուրտ է: Սա հնարավոր է միայն այն դեպքում, եթե այդ ապրումը հաղորդելու համար մտքում որոշակի ընդհանրացում է կատարում և հայտնում իր վիճակը կամ զգացածը: «Այստեղ հարցն այն չէ, որ բացակայում են համապատասխան բառերը կամ հնչյունները, այլ այն, որ թերի են համապատասխան հասկացությունները և ընդհանրացումները: Գրեթե միշտ անհասկանալի է ոչ թե բառը, այլ այն հասկացությունը, որն արտահայտվում է բարի միջոցով: Բառը միշտ էլ պատրաստ է, եթե պատրաստ է հասկացությունը: Այդ պատճառով էլ բոլոր հիմքերը կան բարի նշանակությունը քննելու ոչ միայն որպես մտածողության և խոսքի, այև որպես ընդհանրացման և հաղորդակցման միավորի» (նույն տեղում):

Դպրոցի բոլոր երեք աստիճաններում կարելի է հանդիպել բարի և իրի նույնական ընկալմանը. սովորողը տարբերություն չի տեսնում բարի և դրանով արտահայտված հասկացության միջև: Գ. Բրուտյանը օրինակ է բերում ռուս գրող Կորնեյ Չուկովսկուց, որը նկարագրում է մի դեպք, եթե երեխան չի տարբերում բառը և դրանով արտահայտված իրը: «Բառերի և իրերի նույնացումը ժամանակակից հասարակության մեջ տեղի է ունենում բավարար ինտելեկտեուալ զարգացում չունեցող մարդկանց մոտ...., ընդհակառակը, կուլտուրական մակարդակի զարգացումով զարգանում է քննադատական վերաբերմուճը դրա նկատմամբ» (2, էջ 99):

Այսինքն՝ մայրենի լեզվից (կամ այլ լեզվից) բառ ուսուցանել՝ նշանակում է աշակերտին վարժեցնել տեսնելու և ընկալելու ամեն բարի հետևում թաքնված պատկերը, դրա ընդհանրացնող նշանակությունը: Իսկ այսպիսի ուսուցումը կրթում է մարդու միտքն ու հոգին միաժամանակ, զարգացնում է նրա տրամաբանական և քննադատական մտածողությունը:

Յոգեբանները, հոգելեզվաբաններն ապացուցել են, որ բառը մեծ ներգործություն ունի մարդու վարքի վրա: Մայրենի լեզու ուսուցանել՝ նշանակում է մարդուն ցույց տալ բարի այդ հզոր ուժը սեփական վարքը կարգավորելու առումով: Սովորողը պիտի կարողանա որոշակի բառերով դեկավարել իր մտքերը, ինքն իրեն հրահանգներ տալ և դրանով հաղթահարել սեփական վախսը, անհանգս-

տությունը, զսպել զայրույթը, որը այսօրվա համագործակցային հիմունքներով առաջնորդվող հասարակության համար առաջնային խնդիր է: Այդ է պատճառը, որ նյարդալեզվաբանական ծրագրավորման ներկայացուցիչները (10,11) իրենց փորձարկումներում և պրակտիկ աշխատանքի արդյունքում ցույց են տալիս բառի, ասել է թե՝ **խոսքի հզոր ազդեցությունը սեփական վարքագծի դեկավարման առումով** (նույն տեղում):

Բառապաշտի հարստացման ուղղությամբ կազմակերպվող աշխատանքի ընթացքում կարելի է կիրառել **նյարդալեզվաբանական ծրագրավորման** (NLP) ներկայացուցիչների առաջարկած մի քանի եղանակներ (10,11,13): Նոգերանական այս ուղղության ջատագովներն առաջարկում են բարի ուսուցման ընթացքում հենվել ոչ թե երեխայի մեխանիկական հիշողության վրա, այլ գնալ բառի և հասկացության միջև սերտ կապեր հաստատելու ուղիով:

Մեխանիկական մտապահումից աստիճանաբար անցնում է կատարվում դեպի պատկերային-զգացական ոլորտ. սովորողին մղում ենք բարի հետևում տեսնելու դրա գունեղ և վար պատկերը, լսելու իր ներսից բարձրացող ձայները, նկարագրելու սեփական զգացողությունները: Այս դեպում սովորողը ոչ թե պարզապես այդ բառերը կգործածի նախադասությունների և բառակապակցությունների մեջ, այլ կվերարտադրի իր մտքում ծնված պատկերները, կրնութագորի լսած ձայները, կարտահայտի մարմնական զգացողությունները: Այսինքն բառ սովորելով հանդերձ՝ սովորողը զգայական ընկալման արդյունքում ծնված և մտքում ձևավորված պատկերներն է վերարտադրում կապակցված խոսքի միջոցով:

Օրինակ՝ ուսուցիչը երեխային վարժեցնում է բառն ընկալելու տեսողությամբ, լսողությամբ և շոշափելի-առարկայական զգացողությամբ: Նա երեխաներին առաջարկում է աչքերը փակել, ապա արտասանում է ցանկացած բառ, ասենք՝ ջուր բառը մեկ-երկու անգամ: Յետո դիմում է նրանց:

Քայլ առաջին. տեսողական (վիզուալ) ընկալման խթանում.

Ուսուցիչ - ի՞նչ պատկեր է ծնվում քո մտքում, երբ լսում ես ջուր բառը:

Ա աշակերտ - Ես տեսնում եմ մեր տան ծորակից թափվող ջուրը:

Բ աշակերտ - Ես տեսնում եմ մեր տան կողքով հոսող գետը:

Գ աշակերտ - Ես տեսնում եմ Սևանա լիճը. ալիքները բարձրանում են ափի ավագի վրա, հետո հետ են քաշվում:

Քայլ երկրորդ. լսողական (աուդիոալ) ընկալման խթանում.

Ուսուցիչ - ի՞նչ ձայներ ես լսում, երբ ես ջուր բառն եմ արտասանում:

Ա աշակերտ - Ես լսում եմ թափվող ջրի ձայն:

Բ աշակերտ - Ես լսում եմ, թե ինչպես են անձրկի կաթիլները աղմուկով բախվում գետի ջրերին:

Գ աշակերտ - Ես ալիքների ձայնն են լսում:

Քայլ երրորդ. մարմնական-զգացական (կինեսթետիկ) ընկալման խթանում.

Ուսուցիչ - ի՞նչ ես զգում, երբ լսում ես ջուր բառ:

Ա աշակերտ - Ես ուզում եմ խմել, ուզում եմ ծեռքս պահել թափվող ջրի տակ: Զգում եմ հաճելի զովություն:

Բ աշակերտ - Ես սարսուր և վախ են զգում. ես այնպիսի զգացում ունեմ, թե գետն էլի վարարելու է:

Գ աշակերտ - Ես բոքիկ ոտքերով լծի ափին կանգնելու ցանկություն եմ ունենալու: Զուրը խփվում է ոտքերիս, հետ քաշվում: Այն շատ սառն է, բայց հաճելի: Ես դողում եմ, բայց չեմ ուզում հետ քաշվել:

Դպրոց մտնելու հենց առաջին օրվանից իրականացվող այսպիսի աշխատանքը աշակերտի պատկերավոր մտածողությունն է զարգացնում, հնարավորություն է տալիս տեսնելու բառի և հասկացության կապը: Ինչպես նաև երեխային հնարավորություն է տալիս իմաստավորելու ամեն մի բառի հնչյունական կազմը, լավ լսելու բառի կազմի մեջ մտնող հնչյունները: Այսինքն այսօրինակ աշխատանքը զարգացնում է երեխայի նաև հնչյունային լսողությունը, որը գրանցանալու արդյունավետ կազմակերպման գրավականն է:

Բառապաշտի հարստացման ուղղությամբ աշխատանքները սկսվում են դեռևս նախայբբենական շրջանում: Ուսուցիչ պատմած հեքիաթում, այբբենարանի նկարներում կարող են հանդիպել այնպիսի պատկերներ, որոնց գրական անուններն աշակերտն առաջին անգամ է լսում (3, էջ 283): Ուսուցիչը այդ նոր բառը հստակ արտասանում է և սովորողներին հարցնում, թե ինչ պատկեր է ծնվում նրանց մտքում, երբ լսում են կամ արտասանում այդ բառը: Աշխատում է լսել գրեթե բոլոր աշակերտների կամ շատերի պատասխանները: Ապա հարցնում է, թե լսո՞ւմ են որևէ այլ ձայն այդ բառի արտասանության ընթացքում: Տեղեկանում է նաև բառի առաջացրած մարմնական զգացողության մասին. հարցնում է նաև, թե բառն ուրա՞ն է, թե՞ տիսուր, վախսկո՞՞ն է, թե՞ քաջ և այլն:

Այս ամենից հետո ուսուցիչն առաջարկում է պատմել բառի նաև ավելի ընդարձակ, նշել, թե ուրիշ ինչ բառերի համակցությամբ կարող է կիրառվել դա: Այսինքն՝ իրենից անկախ երեխան խորամուխ է լինում բառի ներքին պատկերային կողմի մեջ, ընկալում է բառի և հասկացության կապը, կարողանում է որոշել դրա տեղը կիրառության առունով, նաև զուտ լեզվաբանական տեսանկյունից: Այսպես նա լավ գիտակցում է, որ, ասենք, ընպանակը առարկա է ցույց տալիս, սպասի պարագա է, որանով կարելի է հյութ խմել, որան կարելի է նաև **գավաթ** կամ **բաժակ** ասել: Միևնույն ժամանակ երեխան սկսում է ընկալել, թե նրբիմաստի ինչ տարբերություններ կան **բաժակ-գավաթ-ըմպանակ** բառերի մեջ, սրանցից ամեն մեկը երբ կարելի է գործածել:

Այս աշխատանքը շարունակվում է նաև գրաճանաչության ուսուցման այբբենական շրջանում. հնչյուն-տառերի ուսուցման ընթացքում կարող են հանդիպել շատ բառեր, որոնք երեխային անծանոթ են: Դրանք պիտի հանգանանորեն քննարկվեն վերոհիշյալ եղանակով:

Սյարդալեզվաբանական ծրագրավորում հոգեբանական ուղղության այս մոտեցումը միանգամայն փոխում է երեխայի պատկերացումը բառի նաևին: Այս տեղին է հիշել ուս մանկավարժ Ս. Ա. Ոլրնիկովայի ասածը. «Սովորեցեք գրանցել հնչյունները, շարժումները, գույները, բառերը, արտահայտությունները» (12, էջ 257): Այսպես քայլ առ քայլ, ամեն հանդիպող բառի քննության միջոցով կարելի է երեխաներին ընկալելի դարձնել բառի արտահայտած նրբիմաստները և տարբեր տեքստերում դրանց գործածության յուրահատկությունները:

Ցանկացած **գրական երկ, ուսուցանվող կամ ընթերցվող թեմա** (4, էջ 70-91) բառապաշտի հարստացման աղբյուր է: Դասարանում ընթերցում են, ապա ուսուցիչը դիմում է դասարանին, թե ինչ բառ չհասկացան: Դրանք վերլուծվում և

մեկնաբանվում են նյարդալեզվաբանական ծրագրավորման առաջարկած սկզբունքով, բացատրվում, գրառվում են բառատետրերում: Ավանդաբար նոր ուսուցանվող բառերը ուսուցչի հրահանգով գործածվում են նախադասությունների կամ խոսքի մեջ: Այս դեպքում հաճախ կարելի է լսել խիստ կցկոտուր նախադասություններ, իսկ լավագույն դեպքում կրտսեր դպրոցականներն ուղղակի կրկնում են մեկնեկու ասածը: Սակայն նյարդալեզվաբանական ծրագրավորման առաջարկած մեթոդներով աշխատելու դեպքում աշակերտը **խոսում** է բարի մասին, դա կիրառում է կապակցված խոսքի մեջ, որն ավելին է, քան սոսկ նախադասություններ կազմելը: Ակզենական շրջանում ուսուցիչը կարող է նախօրոք դուրս գրել, բառարանով ծշտել ընթերցանության թեմայի մեջ առկա անձանոթ բառերի բացատրությունները, գրել գրատախտակին, կարող է գրել նաև մեծ պատահի վրա և տվյալ թեմայի ուսուցման ողջ ընթացքում պահել երեխաների տեսադաշտում: Ապա ամեն բարի շուրջ հանգամանալից աշխատել՝ խթանելով սովորողների զգայական ընկալումը:

Երբ աշակերտները վարժվեն ինքնուրույն աշխատելուն, ուսուցչի հրահանգով կարող են գտնել այդ **բառերի բացատրությունները և հոմանիշները համապատասխան բացատրական կամ հոմանիշների բառարանից**: Այսպիսի աշխատանք ուսուցիչը կարող է կազմակերպել անմիջապես դասարանում: Մեկ կամ երկու աշակերտի կարող է տրամադրել բառարանը և առաջարկել, որ գտնեն անձանոթ բառերի բացատրությունները, նաև հոմանիշները և հականիշները, գրառեն գրատախտակին կամ պատահների վրա և ներկայացնեն ընկերների ուշադրությանը, որից հետո այդ բառերը դարձյալ ներկայացվում են որպես անհատական ընկալված պատկեր, ձայն կամ զգացողություն, դրանց շուրջ հյուսվում են պատմություններ, այսինքն կիրառվում են կապակցված խոսքի մեջ:

Պիտի ասել, որ այսօրինակ ինքնուրույն աշխատանքները Ուշինսկին իրավամբ համարում էր կրտսեր դպրոցում «խոսելու ծիրքի զարգացման» միջոցներից մեկը (7, էջ 362):

Բառապաշարի հարստացմանն են ծառայում տրված բառացանկից **հոմանիշների և հականիշների ընտրությունը** (5): Տրվում են բառերի խառը խմբեր, երեխան դրանցից պիտի առանձնացնի հոմանիշ բառերը:

Ակզենական շրջանում կարելի է դրանք անվանել «ընկեր» բառեր (6), ապա՝ **իմաստով մոտ բառեր**, հետո արդեն կիրառել **հոմանիշ** տերմինը: Նույն կերպ բառախմբից երեխանները պիտի առանձնացնեն հականիշ բառերի զույգերը: Յոմանիշների և հականիշների ուսուցումը կարելի է կազմակերպել դիդակտիկ խաղերի ձևով: Այստեղ օգնության է գալիս նաև կապակարծության մեջ ընդունված բազմաբնույթ մտածողության զարգացման տեսությունը, երբ բարի ուսուցման ընթացքում շեշտադրվում է յուրաքանչյուր երեխային բնորոշ մտածողության այս կամ այն որակը: Օրինակ, հոմանիշների և հականիշների ուսուցումը կարելի է զուգորդել մարմնաշարժողական վարժություններով (1):

ա) Երեխանները կանգնում են շրջանով, ամեն մեկի կրծքին փակցված է մի ստվարաթղթե քարտ, որի վրա բառ է գրված: Երեխանները երաժշտության ուղեկցությամբ պտտվում են, կարող են նաև պարել և հայացքով փնտրում են իրենց ընկերոջը, այսինքն՝ իր կրծքին փակցված բարի հոմանիշը: Երաժշտության դադա-

րի հետ հոմանիշ գույգերի տերերը ծեռք ծեռքի պիտի կանգնեն շրջանի կենտրոնում, իսկ մյուս երեխաները հետևում են, թե արդյոք ծի՞շտ գույգեր են ընտրվել: Օրինակ՝ կարմիր բառն ունեցող աշակերտն ընտրում է ալ բառն ունեցողին և այլն:

թ) Երեխաներին բաժանվում են տարբեր գույների քարտեր. ուսուցիչն ասում է, որ վարդագույնը հոմանիշ բառերի համար է, իսկ կապույտը՝ հականիշ: Նա գրատախտակին գրում է բառերի շարբեր, ապա առաջարկում, որ հոմանիշ բառերի կողքին փակցնեն վարդագույն, իսկ հականիշների կողքին՝ կապույտ քարտերը:

Ուսուցիչը թվում է բառեր, իսկ եթե գրաճանաչ են, տալիս է թերթիկների վրա գրված, առաջարկում է դրանք **ըստ նույն հատկանիշի** խնբավորել:

Օրինակ՝ նույն արմատը կամ վերջաձանցն ունեն, իմաստով մոտ են կամ հակառակ իմաստ են արտահայտում: Ասենք՝ տրվում են *հայ*, *հայր*, *հայրենի*, *հայրական*, *Յայաստան*, *հայություն*, *հորաքույր*, *հայապահպան* բառերը, առաջարկվում է երկու խնբի բաժանել ըստ նույն արմատի: Սովորողները նկատում են, որ չնայած հնչյունների նմանությանը՝ ստացվում են երկու տարբեր խնբեր՝ *հայ* և *հայր* արմատներով կազմված: Դրանից հետո նրանք աղյուսակ են կազմում, որտեղ առանձին սյունակներում գրվում են նույնարմատ բառերը:

<i>հայ</i>	<i>հայր</i>
<i>Յայաստան</i>	<i>հայրենի</i>
<i>հայություն</i>	<i>հայրական</i>
<i>հայապահպան</i>	<i>հորաքույր</i>

Յաճախ աշակերտները դժվարությամբ են ընկալում և տարբերում նույն ծևն ունեցող արմատները և ածանցները: Օրինակ՝ գույն արմատ (վարդագույն, մանուշակագույն), գույն ածանց (վեհագույն, լավագույն), գին արմատ (թանկագին, փրկագին), գին ածանց (կարուտագին, սրտագին): Այս դեպքում էլ նյարդալեզվաբանական ծրագրավորման սկզբունքով աշխատելիս սովորողներն ընկալում են դրանց տարբերությունը: Օրինակ՝ առաջարկվում է համենատել վարդագույն և լավագույն բառերը և ասել, թե ինչ պատկերներ են տեսնում, ինչ ձայներ են լսում կամ ինչ զգացողություն են ունենում այդ բառերը լսելիս: Ահա պատասխանների մի քանի տարբերակ.

Առաջին աշակերտ. *Վարդագույն* բառը լսելիս ես **տեսնում եմ** (վիզուալ) մի վարդ՝ նուրբ թերթիկներով, տեսնում եմ վարդի գույնը, **լսում եմ** ինչ-որ կամաց ձայն (առողիալ), սիրոս **ուրախ է** (կինեսքետիկ):

Լավագույն բառը երբ արտասանում են, տեսնում եմ մրգամանի մեջ մրգեր (վիզուալ), լսում եմ ինչ-որ բարձր ձայն (առողիալ), գգում եմ, որ պիտի շոշափեմ, համենատեմ մրգերը, որ գտնեմ ամենալավը, լավագույնը (կինեսքետիկ):

Երկրորդ աշակերտ. *Վարդագույն*. տեսնում եմ գույն, այդ գույնի հագուստ (վիզուալ), լսում եմ շորի համած ձայնը (առողիալ), հագուստը, ավելի շուտ այդ գույնի հագուստը ինձ շատ է դուր գալիս (կինեսքետիկ):

Լավագույն բառի մեջ գույն չեմ տեսնում (վիզուալ). ինչ-որ շատ ուժեղ ձայն

Եմ լսում (առւդիալ), մի քիչ վախենում եմ (կինեսթետիկ):

Չեխս հետազոտող Զ. Նովակը (8, էջ 119) առաջարկում է հարստացնել սովորողների բառապաշարը՝ կիրառելով բառային զուգորդումների (ասոցիացիաների) ազատ ընտրություն: Ուսուցիչը նախօրոք ասում է, որ հիմա բառերով խաղալու են, որ իր արտասանած ամեն բառից հետո երեխաները պիտի ասեն միտքը եկած առաջին իսկ բառը: Օրինակ՝ **սեղամ, աշակերտները կարող են ասել՝ սենյակ, սփոռց, փայտե, կլոր, բացվում է, ծածկված է, նստել, ուտել և այլն:** Այս առաջադրանքի դեպքում սահմանափակում չկա, երեխան ազատորեն ասում է միտքը եկած առաջին իսկ բառը: Այնուհետև աշխատանքը կարող է բարդանալ: Առարկա ցույց տվող (գոյական) բառի համար նա պիտի ընտրի միայն ածականներ կամ քանակական թվականներ, միայն բայեր կամ թանձրացական գոյականներ:

Օրինակ՝

Առաջադրանք 1: Տրված գոյականների համար ընտրել ածականներ. **դպրոց, ժողովուրդ, տառ, քանակ, ընտանիք, աշակերտ, գիտություն, հարկ, ջահ, աստղ, դաս, օրենք, ցուցակ** և այլն:

Առաջադրանք 2: Տրված գոյականների համար ընտրել միայն բայեր. **սեղամ, բազմոց, լիճ, ծառ, բժիշկ, գրիչ, երկիր, թիթեռ, կով, ծաղիկ** և այլն:

Առաջադրանք 3: Տրված բայերի համար ընտրել միայն գոյականներ. **հնչել, վազել, թռչել, երգել, նստել, մոտենալ, խոխոցել, մրափել, թափվել, նկարել** և այլն:

Իմիջիայլոց, այս աշխատանքի բարդացված տարբերակը կարելի է կիրառել խոսքի մասերի ուսուցման ժամանակ՝ սովորողների բառապաշարը հարստացնելու համար:

Բառերի **բառակազմական վերլուծությունը** և նոր բառերի կազմումը արմատներով կամ ածանցներով կա օգնում են հարստացնելու բառապաշարը: Օրինակ՝ **գրասեղամ = գր-(գիր)+ա+սեղամ:** Նոր բառեր **գիր** արմատով՝ **գրել, գրիչ, գրագիր, գրադարան, անգիր, օսպարագիր** և այլն: Նոր բառեր **սեղամ** արմատով՝ **սեղանատուն, սեղանապետ, սեղանակից** և այլն: Ուսուցիչը ոգևորում է աշակերտներին, որ յուրաքանչյուր արմատով կամ ածանցով հնարավորիս շատ բառեր կազմեն: Իսկ սովորողների գտած կամ ուսուցչի ասած նոր բառի մտապահումը պիտի խթանել նյարդալեզվաբանական ծրագրավորման առաջարկած սկզբունքներով:

Միևնույն ժամանակ, տվյալ արմատով նոր բառեր կազմելով հանդերձ, սովորողները պիտի ցույց տան բառ-արմատի բոլոր կարգի փոփոխությունները:

Բառապաշարի հարստացման արյունավետ միջոցներից է տրված բառերի **խմբավորումն ըստ իմաստի**, օրինակ **սպասք նշանակող բառեր են ընտրվում տրված խառը բառաշարքից՝ ափսե, պնակ, բաժակ, ըմպանակ, գավաթ, գդալ, պատառաքաղ, դանակ:**

Տրված խառը բառաշարքը **խմբավորվում է մի քանի սյունակում**, օրինակ՝ **ա) ծաղիկների անուններ, բ) ծառերի անուններ, գ) կենդանիների անուններ, դ)քանակարժեք բարերի անուններ** և այլն: Նույն կերպ, երբ գաղափար ունեն բառերի խոսքիմասային պատկանելությունից, առանձին սյունակներում խմբավորվում են **առարկա (գոյական), գործողություն (բայ), հատկանիշ**

(ածական), քանակ (թվական), գործողության հատկանիշ (մակրայ) ցույց տվող բառերը:

Բառապաշարի հարստացման, պատկերավոր մտածողության զարգացմանն են նպաստում **առարկայի, իրի, երևոյթի նկարագրությունը նախադասությամբ**, օրինակ՝ «ջրի կաթիլ, որ առավոտյան նստուն է խոտի վրա», իսկ աշակերտը գուշակում է, թե ինչն է դա՝ ցող, կամ «դանակի այն մասը, որով կտրում ենք միսը, հացը» (շելք կամ սայր) և այլն:

Կարելի է տալ տվյալ **առարկայի, իրի, երևոյթի նկարագրությունը բառակապակցությամբ**, երեխան պիտի գտնի համապատասխան բառը. այս աշխատանքը բարդանում է երեխայի տարիքին համապատասխան: Օրինակ՝ **գրելու հարմարանք (գրիչ), առավոտյան խոտի վրա նստող ջրի կաթիլ (ցող), ցողը ցուրտ ժամանակ (եղյամ)** և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում, ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների համար (կազմեցին՝ Աստվածատրյան Մ. և ուրիշներ) Եր., ԱՅՐԵՔՍ, 2001:
2. **Բրուտյան Գ.**, Փիլիսոփայություն և լեզու, Եր., «Հայաստան», 1972:
3. **Գյուլամիրյան Զ.**, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., «Զանգակ-97», 2006:
4. **Գյուլբուդայյան Ս.**, Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., ԵՀՀ, 1978:
5. **Միրումյան Մ.**, «Հոնանիշ, հականիշ և համանուն բառերի ուսուցումը որպես խոսքի զարգացման միջոց», «Զանգակ-97», Եր., 2005:
6. **Սարգսյան Վ. Ա.**, Այրբենարանի ուղեցույց, Եր., «Մակմիլան», 2007:
7. **Ուշինսկի Կ. Դ.**, Սանկավարժական ընտիր երկեր, Եր., «Լույս», 1981:
8. **Акимова М. К., Козлова В. Т.**, Психологическая коррекция умственного развития, М., Академия, 2000.
9. **Выготский Л. С.**, Собрание сочинений, том 2, Мысление и речь, М., Педагогика, 1982.
10. **Дилтс Р.**, Формула языка, www.koob.ru.
11. **Павлова М. А.**, Интенсивный курс повышения грамотности с помощью НЛП, ИИП, М., 2000.
12. **Рыбникова М. А.**, Очерки по методике литературного чтения, М., Просвещение, 1985.
13. **Сакай И.**, Слово, 2005, www.yugrone.ru.

СПОСОБЫ ОБОГАЩЕНИЯ СЛОВАРНОГО ЗАПАСА

T. K. АЛЕКСАНЯН

По мнению русского психолога Л. С. Выготского, слово-обобщение, а также единица общения и мышления. А последователи НЛП /Р. Дилтс, М. А. Павлова, И. Сакай/ рассматривают слово, как единицу-символ, которая имеет большое влияние на проявление, поведения человека и управление им.

Исходя из вышеизложенного, автор статьи предлагает новые способы обогащения словарного запаса в младшей и средней школах. В основе восприятия слова и понятия ставится стимулирование зрительных /визуальных/, слуховых /аудиальных/, телесно-осознательных /кинетических/ ощущений.

Автор предлагает обогащение словарного запаса с помощью дидактических игр, методов группировки, обобщения, ассоциаций и других способов.

METHODS OF ENRICHING VOCABULARY

T. K. ALEKSANYAN

According to Russian psychologist Vigotsky, a word is a generalization, as well as a unit of communication and thinking. But followers of NLP /R. Dilts, M. A. Pavlova, I. Sakai/ see the word as a unit-symbol, which has great influence on the manifestation of human behavior and management.

Based on the foregoing, the author of this article offers new ways to enrich the vocabulary in the junior and secondary schools. The basis of perception of words and concepts put promotion of the visual /video/, auditory /audio/, and tactile, bodily /kinesthetic/ feeling.

The author proposes to enrich vocabulary with the help of educational games, group methods, generalization, associations and other methods.

ԳՈՅԱԿԱՆ ՈՐՈՇՉԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: ՈՒՂԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԳՈՅԱԿԱՆ ՈՐՈՇՉԻ ԱՌԱՋԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Կ. ԽԱՆՈԱՆՅԱՆ
գՊՀ դասախոս

Որպես քերականական իրողություն՝ բառակապակցությունն ուսումնասիրվում է լեզվի շարահյուսություն բաժնում: Այն բառականաչափ լավ ուսումնասիրված լեզվական իրողություն է: Տարբեր լեզվաբաններ մեզ առաջարկում են բառակապակցությանը վերաբերող գրեթե նույնատիպ սահմանումներ և դասակարգումներ: Ս. Աբրահամյանը գտնում է, որ «բառակապակցությունը շարահյուսական բաղադրյալ միավոր է, որի բաղադրիչ բառերը պահպանում են իրենց բառային արժեքը և կապված են քերականական, բայց ոչ ստորոգման հարաբերությամբ»:¹

Ա. Պապոյանը և Խ. Բաղիկյանը մեզ առաջարկում են նմանատիպ սահմանում: «Երկու կամ ավելի լիիմաստ, ստորադասական հարաբերություն ունեցող, նախադասության մեջ մեկ ամդամի դեր կատարող, անվանական արժեք ունեցող բառախումբը կոչվում է բառակապակցություն»²:

Մինչդեռ Ռ. Իշխանյանը գրում է, որ «Բառակապակցություն է երկու կամ ավելի բառերի քերականական կապակցությունը, որն արտահայտում է մեկ հասկա-

¹ Ա. Աբրահամյան, Դայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, 2004, էջ 5:

² Կրտ. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003, էջ 38: